«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը պատմություն առարկայի ուսուցման գործընթացում

Առարկան՝ Հասարակագիտություն

Հետազոտող ուսուցիչ՝ Արմինե Սիմոնյան

Ուսումնական հաստատություն՝ Եղվարդի թիվ 1 ավագ դպրոց

Երևան 2023

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն

Սովորողների քննադատական մտածողության զարգացումը պատմություն առարկայի ուսուցման գործընթացում

Եզրակացություն

Գրականության ցանկ

Ներածություն

Այս աշխատանքում ընդգծվում է աշակերտների քննադատական մտածողության հմտությունների զարգացման կարևորությունը պատմության դասավանդման ընթացքում: Որպես ներգործության միջոց՝ առանձնացվում է հարցադրումներով իրականացվող ուսումնառությունը: Այն կօգնի բացահայտել պատմական փաստերի ու երևույթների պատճառահետևանքային կապերը, կզարգացնի դրանք գնահատելու կարողությունը՝ ձևավորելով փոխանցելի հմտություններ:

Բանալի բառեր. ինֆորմացիա, քննադատական, ստեղծագործական մտածողություն, պատճառահետևանքային կապ, վերլուծություն, բաց հարցեր, գնահատում, ճանաչողություն:

Սույն հոդվածի նպատակն է առաջարկել միջոցներ աշակերտների՝ պատճառահետևանքային կապերը վերլուծելու, փաստերն ու երևույթները գնահատելու հմտության զարգացման համար, որոնք ինքնին քննադատական և պատմական մտածողության մաս են կազմում: Առաջադրված վարկածն է՝ բաց հարցերի միջոցով իրականացվող ուսումնառությունը կարո՞ղ է նպաստել նշյալ հմտությունների զարգացմանը: Քննադատական մտածողությունը մտածողության համակարգ է, որն օգտագործվում է փաստերի ու իրադարձությունների վերլուծության համար, հնարավորություն է տալիս փաստարկված եզրակացություններ անել, հիմնավորված գնահատականներ տալ, մեկնաբանել, կիրառել ստացված արդյունքները նման այլ իրավիճակներում: Քննադատական մտածողության բաղադրատարրերը համարվում են գլոբալ մտածողության բաղկացուցիչ և՝

- կանխորոշում են ուսումնառության նպատակները,
- հանգեցնում են կարծրատիպերի հաղթահարման,
- նպաստում են աշխարհի ամբողջական ընկալմանը,
- նպաստում են աշխարհի ճանաչմանը իր բոլոր կողմերով,
- ապահովում են անձի բաց լինելը այլընտրանքի նկատմամբ,

զարգացնում են պրոբլեմի լուծման ալտերնատիվ ուղիները տեսնելու կարողությունը: Սուխոմլինսկին սովորողների մտածողության զարգացումը դպրոցական կրթության ամենասուր, ամենախնդրահարույց պրոբլեմներից մեկն է համարել [3]: Գիտելիքի և մտածողության միջև եղած կապը փորձում է բացահայտել Դայանա Հալպերնը: Մտածողությունը օգնում է մեզ կիրառել նախկինում ձեռք բերված գիտելիքները նորը կառուցելու համար: Մտածողության այդ տեսակին դիմում են

խնդիրներ լուծելիս, եզրակացություններ ձևակերպելիս, երևույթներ ու փաստեր գնահատելիս, որոշումներ ընդունելիս: «Քննադատական» բառը իր մեջ գնահատողական բաղադրիչ է պարունակում: Երբեմն այդ բառի ներքո ինչ-որ բացասական երանգ է փոխանցվում: Բայց գնահատականը պիտի լինի կառուցողական՝ արտահայտելով և՛ դրական, և՛ բացասական վերաբերմունք: ՔՄ-ն կոչում են նաև նպատակադրված մտածողություն, որովհետև այն ուղղված է ցանկալի արդյունքի ստացմանը:

Արդիականությունը:

Ժամանակակից աշխարհում ինֆորմացիայի արագ ներհոսքի պայմաններում կարևորագույն խնդիր է դառնում ոչ միայն ինֆորմացիային տիրապետելը, այլև արժևորելը և համապատասխան իրավիճակներում կիրառելը: Այս խնդիրը առկա է հասարակական կյանքի գրեթե բոլոր բնագավառներում, երբ մարդիկ, առանց երևույթների պատճառների մեջ խորամուխ լինելու, չհիմնավորված եզրակացություններ են անում, տալիս են միակողմանի գնահատականներ, առանց վերլուծելու կրկնում են այլոց տեսակետներն ու կարծիքները: Մեր խնդիրն է սովորեցնել առարկայորեն մտածել և առարկայի միջոցով ձևավորել քննադատական մտածողության (այսուհետև՝ ՔՄ) որոշակի փոխանցելի հմտություններ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի ակունքներում կանգնած են այնպիսի հոգեբաններ և մանկավարժներ, ինչպիսիք են Լ.Ս.Վիգոտսկին, Լ.Վ. Զանկովը, Դ.Բ. Էլկոնինը, Վ.Վ. Դավիդովը և այլք: Այս տեխնոլոգիան առաջին հերթին կապում են քսաներորդ դարի հայտնի հոգեբան Լ.Ս. Վիգոտսկու անվան հետ:

Մինչև Լ.Ս. Վիգոտսկին մանկավարժության մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ ուսուցման ու դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպել երեխայի զարգացման մակարդակին համապատասխան: Բայց, ի հակառակ դրան, Վիգոտսկին առաջ է քաշում այն դրույթը, որ ուսուցումը միշտ պետք է առաջատար լինի երեխայի հոգեկան զարգացման նկատմամբ: Այսինքն՝ հենվելով երեխայի զարգացման ունեցած ռեալ ներկա մակարդակի վրա, ուսուցումը պետք է լինի մեկ քայլ առաջ, խթանի և իր ետևից տանի այն: Իսկ դա նշանակում է, որ գիտելիքների ձեռքբերումը պետք է կազմակերպվի դժվարության առավել բարձր մակարդակով, այնպես, որ մշտապես նոր տարրեր մտցնի երեխայի գործունեության

մեջ, ձևավորի նոր հարաբերություններ, բացահայտի նրա ներքին հնարավորությունները: Զարգացում ապահովելու համար ուսումնական նյութն ու ուսուցման մեթոդները պետք է լինեն այնպիսին, որ երեխաներին կանգնեցնեն որոշակի դժվարությունների առաջ: Հենց վերջիններս հաղթահարելով էլ սովորողների մեջ տեղի է ունենում զարգացում: Հակառակ դեպքում նրանց զարգացումը ընթանում է շատ դանդաղ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ ուսուցիչը հանդես է գալիս ոչ միայն ճշմարտության ու գիտելիքների հաղորդողի , այլ նաև որոնողական աշխատանքի կազմակերպչի ու ուղղորդողի դերում: Ըստ Վիգոտսկու՝ սովորողներն ունեն զարգացման երկու տարբեր աստիճաններ՝ իրական զարգացման և հնարավոր զարգացման աստիճան:

Իրական զարգացման աստիճանը անհատի մտավոր ներկա մակարդակն է, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու ընդունակությունը: Հնարավոր զարգացման աստիճանը Վիգոտսկին անվանել է մոտակա զարգացման գոտի: Դա այն աստիճանն է, երբ անհատը գործում է ուսուցչի, ծնողների կամ առավել զարգացած հասակակցի օգնությամբ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի գլխավոր նպատակը այն է, որ նախապատրաստի երեխային ինքնուրույն ճանապարհով գիտելիքների ձեռքբերմանը, ճշմարտության որոնմանը: Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան պետք է համապատասխանի մի շարք պահանջների, որոնցից առավել կարևորներն են ուսուցման նպատակաուղղվածությունը, մոտիվացիան, գործնական ուղղվածությունը, ուսուցման փուլայնությունը, հետադարձ կապի առկայությունը:

Ուսուցման նպատակաուղղվածությունը ենթադրում է ուսուցման նպատակների հստակ ներկայացում:

Ուսուցման մոտիվացիան կարող է լինել տարբեր. հետաքրքրություն գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման բուն գործընթացի հանդեպ, սովորողների հետ հաղորդակցվելու ցանկություն, ձգտում հետագայում աշխատանք գտնելու հանդեպ և այլն: Ուսուցման գործնական ուղղվածությունը այն է, որ ուսուցումը առաջին հերթին պետք է ուղղված լինի այնպիսի գիտելիքների յուրացմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ

են կյանքում գործնական մի շարք խնդիրների լուծման համար: ՈՒսուցման փուլայնությունը ենթադրում է ուսուցման նկատմամբ տրամաբանական, հերթական, համալիր մոտեցում: Հետադարձ կապի առկայությունը: ՈՒսուցման արդյունքները միշտ պետք է համապատասխանության և համեմատության մեջ գտնվեն ուսուցման նպատակների հետ , որի հաջող իրականցմամբ էլ կորոշվի ուսուցման արդյունավետության չափը:

Գրական ակնարկ

Քննադատական մտածողության տեխնոլոգիան, ունենալով շատ հին պատմական արմատներ, վերջին շրջանում ինքնուրույն զարգացում է ապրել և այսօր դարձել է մանկավարժական առաջատար տեխնոլոգիաներից մեկը: Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայի ակունքներում է ընկած հույն դասական փիլիսոփա Սոկրատեսի առաջարկած ուսուցման <էվրիստիկ> կամ սոկրատեսյան հարցադրումների մեթոդը:

Փիլիսոփայական տեսանկյունից քննադատական մտածողությունը դիտարկվում է որպես տրամաբանական, ռեֆլեքսիվ, ստեղծագործական մտածողության յուրահատուկ ձև: Քննադատական մտածողության զարգացման հարցերը տրամաբանորեն կապված են անձի ստեղծագործական գործունեության, ինքնիրացման, ինքնուրույնության հետ: Քննադատական մտածողությունը բնութագրվում է որպես ճանաչողական գործընթաց, որը վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով:

Այլ կերպ ասած՝ քննադատական մտածողությունը ռեֆլեքսիվ մտածողություն է, որը զարգացնում է տեղեկատվությունը մշակելու, գնահատելու և ստեղծագործաբար կիրառելու կարողությունը:

Քննադատական մտածողությունը նպաստում է ըստ իրավիճակների գործունեության ձևեր ու եղանակներ ընտրելուն, հիմնավորված որոշումներ ընդունելուն, հիմնախնդիրներ բացահայտելուն, վարկածներ առաջադրելուն, այլընտրանքային տեսակետներ ընդունելուն կամ հիմնավորված մերժելուն, գնահատողական վերաբերմունք ձևավորելուն: Նշված հատկանիշները պահանջում են ճանաչողական բարձր կարողությունների ձևավորվածություն, քանի որ նմանօրինակ գործընթացների համար անհրաժեշտ է խնդրի համակողմանի ուսումնասիրություն հուսալի տեղեկատվության և դրա նկատմամբ վերլուծական - գնահատողական վերաբերմունքի հիման վրա:

Անձի քննադատական մտածողության ձևավորումը կախված է նրա ընդունակություններից, հետաքրքրություններից, կարևոր են նաև ուսումնական

նյութի բովանդակությունն ու կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները: Ուսումնական թեմաների արդիականությունը, պրոբլեմային բնույթը, ուսումնաճանաչողական գործընթացի սուբյեկտների ինքնուրույնությունն ու հաղորդակցման վրա հիմնված փոխգործակցությունը, տեղեկատվական-կրթական միջավայրը, գիտական գիտելիքները, վերլուծական կարողությունները նպաստում են քննադատական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողությունը դրսևորվում է խոսքային գործունեության բոլոր ձևերում:

Քննադատական մտածողության զարգացմանը նպաստում են ուսումնական նյութերում արտահայտված մտքերի և դիրքորոշումների գնահատումը, բազմատեսանկյուն դիտարկումը, սեփական մտքերի հետ համեմատումը, համադրումը, եզրահանգումների ձևակերպումը:

Քննադատական մտածողության զարգացման սկզբունքներն են տեղեկատվության գիտականության, արժանահավատության, մատչելիության ապահովումը, ուսումնասիրվող նյութերի սոցիալ-մշակութային բովանդակությունը, ուսումնաճանա¬չողական գործընթացի հաղորդակցական բնույթը, քննադատական մտածողության և ճանաչողական ակտիվության զարգացման ձևերի ու միջոցների կիրառումը:

Քննադատական մտածողության էությունն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվի սովորողի ուսումնական աշխատանք կազմակերպողի: Աշակերտը ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ինքն է ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ:

Քննադատական մտածողությունը ճանաչողության ինտերակտիվ գործընթաց է: Այն ընդհանրական մոտեցում է, որը օգնում է սովորողներին գնահատել գաղափարների արժեքը կամ արդյունքները՝ նախքան որոշումներ կայացնելը կամ տեսակետ ձևավորելը:

Շատ կարևոր է կարողանալ ստացած տեղեկատվությունը տեսակավորել, համակարգել և որոշել դրա կարևորությունն ու տեղը գիտելիքների համակարգում:

Աշակերտները պետք է կարողանան որոշել, թե զանազան տեղեկությունները ինչպես են առնչվում միմյանց հետ: Նրանք պետք է կարողանան առանձնացնել նոր

գաղափարը համատեքստում, գտնեն անծանոթ հասկացության իմաստը և մերժեն այն տեղեկատվությունը, որը չի առնչվում համատեքստին կամ ճիշտ չէ:

Աշակերտները պետք է դառնան քննադատաբար մտածող և սովորող մարդիկ, սակայն դրան հասնելու համար աշակերտներին անհրաժեշտ է ուսուցչի օգնությունը:

Քննադատական մտածողության զարգացման տեխնոլոգիայով անցկացվող դասի մոդելը նկարագրվում է որպես ճանաչողական գործընթաց, ուր սովորողները ներգրավվում են և՝ նախքան նոր նյութի մատուցումը /խթանում/ , և՝ նյութի մատուցման ընթացքում /իմաստավորում/ և՝ նյութը մատուցելուց հետո /կշռադատում/ /ըստ ԽԻԿ համակարգի/ :

Այսպիսով՝ կարելի է ասել, որ՝

1. Գիտելիքը /տեղեկատվությունը/ ոչ թե քննադատական մտածողության արդյունքն է այլ նրա խթանը կամ առաջին քայլը:

2. Քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրումներից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից:

3. Քննադատական մտածողությունը պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորում:

4. Քննադատական մտածողությունն ունի հասարակական ուղղվածություն:

Գործնական համատեքստ

Քննադատական մտածողությունը զարգացնում է՝

- սովորողների՝ խմբերում աշխատելու կարողությունը,
- միջառարկայան և ներառարկայական կապերի ձևավորման կարողությունները /տեղեկատվության վերլուծություն և համադրություն/,
- գիտելիքները ստեղծագործաբար իմաստավորելու, տեղեկատվության՝ ըստ նոր և կարևոր լինելու ասատիճանի համակարգելու կարողությունը,
- հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու և դրա համար անհրաժեշտ կարողություններ և հմտությունները,
- տարբեր կարողություններ ունեցող մարդկանց հարգելու կարողությունները,
- սեփական նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունները,

սեփական սկզբունքները պահպանելու կարողությունները

Ինչպես ցույց տվեցին հետազոտության արդյունքները, ՀՀ նախկին կրթական համակարգը չի նպաստում քննադատական մտածողության զարգացմանը: Բոլոր այն նախապայմանները, որոնք անհրաժեշտ են այդ մտածողության զարգացման համար գրեթե ամբողջությամբ բացակայում են: Տրամաբանական է նաև այն, որ սովորողները չունեն քննադատաբար մտածելու համար անհրաժեշտ հմտությունները, քանզի ցանկացած հմտություն, որպես կանոն, ձևավորվում է որևէ գործողություն պարբերաբար կրկնելու արդյունքում:

Հրատապ խնդիր է ուսումնական պլանների և առարկայական ծրագրերի բովանդակության բարեփոխմանը զուգահեռ փոխել դասավանդման և ուսանելու ներկա տեխնիկաները և ոճը՝ շեշտելով քննադատական մտածողությունը: Սովորողի քննադատական մտածողությունը զարգացնելու լավագույն մեթոդն այն է, որ ոչ թե առանձին դասընթաց պարտադրվի սովորողներին, այլ ուսումնական պլանը և առարկայական ծրագրերը մշակվեն՝ հիմքում ունենալով քննադատական մտածողություն ձևավորելու տեսլականը: Քննադատական մտածողությունը ոչ թե պետք է հանդիսանա որևէ առարկայական ծրագրի ուսումնառության արդյունքը, այլ պետք է լինի բոլոր դասընթացների ավարտին ձեռքբերած կողմնակի արդյունքը:

Այսինքն, գիտելիքի ձեռքբերմանը զուգահեռ սովորողները պետք է կարողանան մտածել, տրամաբանել և հիմնավորել:

Վերոնշյալից ակնհայտ է դառնում, որ քննադատական մտածողության ձևավորման և զարգացման գործում անգնահատելի է ուսուցչի դերը: Փայլուն ձևակերպում են ներկայացրել Պերկինսն ու Սալոմոնը՝ ասելով, որ այսօր "հիշողությունները կրթելուց մենք անցում ենք կատարել միտքը կրթելուն:"

Հարցումները վկայում են նաև այն մասին, որ շատ փոքր թիվ են կազմում քննադատաբար մտածող ուսանողները: Այս արդյունքն ամենևին անակնկալ չէր, քանզի բացակայում են այն նախադրյալները, որոնք ձևավորում են քննադատական մտածողություն: Սակայն հարկ է նշել, որ շնորհիվ այդ փոքրաթիվ ուսանողների հնարավոր եղավ տեսնել կապը քննադատական մտածողության և կոնֆլիկտների կարգավորման միջև:

Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման խնդիրը խիստ բազմաշերտ է: Այստեղ կարևոր են առարկայական ծրագրերը, դասավանդման մեթոդները, ուսուցչի ուղղորդիչ դերը, գրականության մատչելիությունը, դասընթացի տևողությունը, և անկասկած շատ կարևոր է, թե որքանով է ուսուցիչը անձամբ տիրապետում քննադատական մտածողությանը: Կարող է հակասական հնչել, բայց ուսանողակենտրոն ուսուցում կազմակերպելու համար անհրաժեշտ է վերապատրաստել ուսուցչին հստակ ներկայացնել այն արդյունքը, որն ակնկալում ենք ուսուցչից:

Հիմք ընդունելով քննադատական մտածողության դասավանդման ուղղությամբ իրականացրած հարուստ հետազոտական փորձը, ինչպես նաև ՀՀ բուհերում կատարած մեր ուսումնասիրությունը՝ ներկայացնում ենք հինգ փուլից բաղկացած շրջանակային մոդել, որի ներդրմամբ հնարավոր կլինի քննադատական մտածողություն ձևավորել և զարգացնել ցանկացած դասընթացի շրջանակներում:

Հետազոտության ընթացք

Քննադատական մտածողության համար անհրաժեշտ հմտությունների հիմնական մասը ձեռք է բերվում Բլումի տաքսոնոմիայի վերլուծության, սինթեզի և գնահատման մակարդակներում: Հետևաբար դասախոսը պետք է ուսանողին ընձեռի

բազմաթիվ հնարավորություններ այդ երեք մակարդակներին բնորոշ գործողություններում ներգրավվելու համար:

Առաջարկվող մոդելի առաջին քայլը ենթադրում է *դասընթացի ուսումնառության արդյունքների սահմանում*: Գիտենք, որ յուրաքանչյուր դասընթաց որևէ բնագավառի սահմաններում ուսանողին տրամադրում է գիտելիք, որն իր հերթին հիմք է այլ գիտելիքի ձևավորման համար: Ուստի դասախոսը պետք է հստակեցնի, թե ինչ վարքագիծ ուսանողը կարող է դրսևորել դասընթացի ավարտին: Որպեսզի քննադատական մտածողությունը մաս կազմի այդ վարքագծի, պետք է ուսումնառության արդյունքները սահմանել Բլումի տաքսոնոմիայի վերոնշյալ երեք մակարդակներից մեկի կամ մի քանիսի լեզվով:

Բլումի տաքսոնոմիայի մակարդակներից յուրաքանչյուրին հատուկ է բայերով արտահայտված գործողությունների կամ վարքագծի խումբ, և մտածված գրված ուսումնառության արդյունքները հնարավորություն կտան դասախոսին դասընթացի ավարտին ուսանողից ակնկալել որևէ մակարդակին հատուկ վարքագիծ: Օրինակ, եթե դասընթացը, ի թիվս այլ հմտությունների, միտված է ուսանողի մոտ զարգացնել վերլուծության հմտությունը, ապա ուսումնառության արդյունքում ուսանողից կպահանջվի քննարկել, դասակարգել, տարբերակել, վերլուծել, պարզաբանել, հիմնավորել և այլն: Սինթեզի պարագայում, ուսանողից կակնկալվի միավորել, կառուցել, ստեղծել, ենթադրել, իսկ օրինակ գնահատման մակարդակում ուսանողը պետք է գնահատի, քննադատի, առաջարկի, կանխատեսի և այլն: Այսինքն, կախված դասընթացի նպատակից, ուսումնառության արդյունքները կարող են գրված լինել վերոնշյալ բայերից մեկով, որոնք իրենց հերթին ենթադրում են որոշակի վարքագծի դրսևորում: Նշենք նաև, որ մակարդակներին ներհատուկ բայերն ավելի շատ են, քան այստեղ ներկայացված օրինակները:

Ուսումնառության արդյունքներին հասնելու տեսանկյունից շատ կարևոր է դասի պլան կազմելը: Արևմտյան կրթական պրակտիկայում նախքան լսարան մտնելը դասախոսը կազմում է տվյալ դասի պլանը, որտեղ իր համար հստակեցնում է, թե լսարանային ժամի որ մասն ինչին է հատկացնելու: Սովորաբար դասի մի հատված նվիրված է լինում հարց ու պատասխանին, որտեղ դասախոսը լսարանին է ուղղում հարցեր, որոնց միջոցով ակտիվացնում է ուսանողների մտածողությունը քննարկվող

թեմայի շուրջ: Լավ մտածված և կազմված հարցերը կմղեն ուսանողին ընդգրկվել քննադատաբար մտածելու գործողության մեջ:

Առաջարկվող շրջանակային մոդելի երկրորդ փուլը ենթադրում է *դասավանդում՝ հարցեր տալու միջոցով*: Ինչպես նշեցինք առաջին քայլի քննարկման ժամանակ, ուսանողներին հարցեր տալը հանդիսանում է դասավանդման և ուսումնառության կենսական կարևորություն ունեցող մասը: Հարցադրումներն օգնում են դասախոսին ստուգել, թե որքանով են ուսանողները նյութը յուրացրել, հաստատել նրանց կողմից ձեռք բերված գիտելիքը և, որն ամենակարևորն է, քննարկումների միջոցով խթանել նոր մտքերի, հասկացությունների ձևավորումն ու զարգացումը: Դասախոսը կարող է հանդես գալ նոր մարտահրավերներ նետողի դերում, և այս պարագայում ուսանողը ստիպված է լինում հստակեցնել իր դիրքորոշումը և պաշտպանել այն:

Հարցադրումներ ներկայացնելու տեխնիկան օգտագործվում է ուսանողի մտածելու կարողությունը զարգացնելու համար: Հարցադրումները կարող են լինել պարզ և միանշանակ (համամետ), և կարող են լինել շատ բազմանշանակ հարցեր (տարամետ), որոնք չունեն մեկ հստակ ճիշտ կամ սխալ պատասխան: Քննադատական մտածողության ձևավորման և զարգացման տեսանկյունից կարևոր են տարամետ հարցերը, որոնք սովորաբար լինում են բաց հարցերի տեսքով, նպաստում են քննարկումների ծավալմանը և հետևաբար նպաստում են քննադատական մտածողության հմտությունների զարգացմանը:

Մոդելի երրորդ փուլը ենթադրում *է նախքան գնահատելը ուսանողին տալ սովորածը կիրառելու հնարավորություն*: Բազմիցս նշել ենք, որ ժամանակակից կրթական համակարգում դասավանդումը պետք է իրականացվի ակտիվ ուսումնառության միջոցով: Բոնուելն ու Էյիսոնը նշում են, որ ակտիվ ուսումնառությունն այն է, երբ ուսանողներն ընդգրկվում են այնպիսի գործողությունների մեջ, որը ստիպում է նրանց մտածել սեփական քայլերի, գործողությունների, մտքերի մասին: Հետևաբար տրամաբանական է, որ ուսանողն առավել լավ է յուրացնում և երկար է պահում այն գիտելիքը, որի շուրջ իր տեսակետն ու կարծիքն է արտահայտել:

Երբ մշակվում է առարկայական ծրագիրը, իդեալական կլիներ նախապես մտածել ակտիվ ուսումնառությունն ապահովող այն տեխնոլոգիաների մասին, որոնք հնարավորություն կտային ուսանողին ինքնուրույն հավաքել ինֆորմացիա և ձևավորել սեփական մտքերը, ինքնուրույն մոդելավորելու և դիտարկելու փորձ ձեռք բերել, ինչպես նաև հնարավորություն ընձեռել ձեռք բերելու ռեֆլեկտիվ գործողություն իրականացնելու անմիջական փորձ (գրել ռեֆերատներ, կազմել պորտֆոլիո, պրակտիկ աշխատանքում կիրառել սովորածը):

Առաջարկվող մոդելի չորրորդ փուլը ենթադրում է *վերանայում, բարելավում և կատարելագործում*: Ցանկացած առարկայական ծրագիր, որքան էլ լավ մտածված լինի, ունի որոշ թերություններ, որոնք երևան են գալիս դասավանդման ընթացքում: Առարկայական ծրագրի թարմացումը և թերությունների վերացումը պետք է լինի յուրաքանչյուր ուսուցչի գլխավոր գործառույթներից մեկը: ՀՀ կրթական համակարգում, երբ խիստ հազվադեպ է ուսուցիչը կոչված ինքնուրույն վերափոխելու իր առարկայական ծրագիրը և այդ գործառույթը պատկանում է ամբիոնին, դասախոսը պետք է ներկայացնի վերանայման և բարելավման առաջարկություններ, և հետևողական լինի, որ ներկայացված փոփոխություններն անպայման տեղ գտնեն նորացված առարկայական ծրագրում: Սակայն որպեսզի դասախոսը կարողանա թերությունները գտնել, ինչպես նաև մշակել նոր մոտեցումներ, անհրաժեշտ է, որ նա լսարանում դասախոսից բացի լինի նաև դիտորդ: Որպես դիտորդ, նա պետք է գնահատի թե որքանով են ուսանողները տրիրապետում նախասահմանված ուսումնառության արդյունքներին, դասընթացի որ հատվածներն են հատկապես խրթին և անհասկանալի եղել ուսանողների մեծամասնության համար, որոնք են դասընթացի թույլ և ուժեղ կողմերը և այլն:

Դասընթացի բարելավման տեսանկյունից օգտակար կարող է լինել դասընթացի վերաբերյալ ուսանողական հարցումների արդյունքները: Հարցումներ իրականացնելու շատ մեթեդներ կան, բայց մենք առաջարկում ենք ընտրել ստորև ներկայացված երկու մեթոդներից: Այժմ շատ տարածված են հարցաշարերը, որտեղ ուսանողը կամ գնահատում է դասընթացի տարբեր հատվածները, կամ լրացնում է իր կարծիքն այդ հատվածների/բաղադրիչների վերաբերյալ: Երկրորդ տարբերակը հակիրճ շարադրություն գրելու տեսքով դասընթացը գնահատելու մեթոդն է: Այս

տարբերակում ուսանողը սահմանում է դասընթացի ժամանակ սովորած ամենակարևոր կետերը: Այս մեթոդների կիրառումը հնարավորություն է ընձեռում դասախոսին անմիջապես ուսանողից հասկանել, թե դասընթացի որ հատվածներն են հաջողվել, և որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն:

Առաջարկվող մոդելի եզրափակիչ փուլը ենթադրում է *հետադարձ կապի տրամադրում և ուսումնառության գնահատում*: Իրականում, հետադարձ կապի ապահովման նպատակը ուսանողի ուսումնառության որակի բարելավումն է և ամենակարևորը, օգնում է ուսանողին հասկանալ, թե ինչպես կարող է ինքը ապագայում գնահատել իր գիտելիքը և այդ գիտելիքի դրսևորումը:

Ուսումնառության գնահատումը նույնպես կարող է հանդիսանալ հետադարձ կապի տրամադրման ձև: Այս տեսանկյունից կարևոր է դասախոսի դիտողություններն ու մեկնաբանությունները (հնարավոր է նաև գրավոր) ուսանողի ներկայացրած աշխատանքի վերաբերյալ: Այդ մեկնաբանությունները պետք է ունենան առավելապես ինֆորմատիվ, քան վերահսկիչ բնույթ, պետք է օգնեն ուսանողին հասկանալ իր թույլ կողմերը և ուղղություն ցույց տան թերացումները վերացնելու և բարելավելու նպատակով:

Գնահատումը հնարավորություն է տալիս նաև հասկանալու, թե որքանով են ուսումնառության արդյունքները ուսանողի կողմից ձեռք բերվել: Այդ արդյունքի վերլուծությունը կօգնի նաև հասկանալ դասընթացի թույլ և ուժեղ կողմերը, և դասախոսի դիտորդական գրառումների և ուսանողների հարցումների հետ համատեղ, բավարար ինֆորմացիա կտա հիմնավորելու բարելավման և կատարելագործման նպատակով ներկայացվող առաջարկությունները:

Ներկայացվող երկրորդ առաջարկությունը սերտոնեն կապված է առաջին առաջարկության հետ: Առաջարկվող շրջանակային մոդելի վերլուծությունը թույլ է տալիս հասկանալ, որ այն ընդգրկում է երեք խոշոր բաղադրիչ. ուսումնառության արդյունքների սահմանում, դասավանդման տեխնոլոգիաների ներդրում և գնահատման վերանայված գաղափարախոսության սահմանում:

Հետազոտության արդյունքների կիրառման տեսանկյունից գերադասելի է շրջանակային մոդելի ամբողջական ներդրումը, սակայն այլընտրանքային տարբերակ կարող է լինել վերոնշյալ երեք հիմնական ուղղություններով սեմինար

դասընթացների կազմակերպումը: Ի դեպ դասընթացների համար թիրախային լսարան են ինչպես դասախոսները, այնպես էլ ուսումնական հաստատությունների վարչական անձնակազմը: Հայկական իրականությունում խիստ կարևոր է, որ նման դասընթացներին մասնակցեն վարչական ստորաբաժանումների, այդ թվում ամբիոնների և դեկանատների աշխատակիցները, քանի որ դասախոսների ինքնուրույնությունը շատ սահմանափակ է և որոշում ընդունողները հիմնականում վարչական անձնակազմի ներկայացուցիչներն են: Եթե դասախոսները ինչ-որ խողովակներով տեղեկանում են կրթական բնագավարում գոյություն ունեցող նորարարական մոտեցումներին, ապա վարչական անձնակազմն այս տեսանկյունից առավել խոցելի է:

Ինչ վերաբերում է սեմինար դասընթացներին, ապա արդյունավետության տեսանկյունից գերադասելի է մշակել վերապատրաստման երեք դասընթացներից բաղկացած սեմինարների շարք, որտեղ մի դասընթացին մասնակցությունը նախապայման պետք է լինի հաջորդին մասնակցելու համար:

Ներկայացված երկու առաջարկություններն էլ բավականին ընդգրկուն են և երկուսն էլ միտված են կրթական այնպիսի միջավայրի ձևավորմանը, որը կնպաստի քննադատական մտածողության զարգացմանը: Նշենք նաև, որ չնայած այն հանգամանքին, որ առաջին առաջարկությունում վերապատրաստումների իրականացման մասին հատուկ չենք նշել, սակայն կարծում ենք տրամաբանական է, որ մոդելի ներդնումը ինքնին ենթադրում է նախնական ճանաչողական և այնուհետև կիրառական վերապատրաստումների կազմակերպում:

Ներկայացված առաջարկությունները միմյանց հակասող չեն և հնարավոր է կիրառել միաժամանակ: Առաջին առաջարկությունը ենթադրում է առավել համակարգային մոտեցման դրսևորում, իսկ երկրորդը հնարավոր է իրականացնել նույնիսկ բուհի ֆակուլետի մակարդակով: Կախված նրանից, թե մեր կողմից թիրախ ընտրված խմբերից որն առավել ամուր քաղաքական կամք կդրսևորի բարեփոխումների ներդրման նպատակով, մենք առաջարկում ենք առաջարկությունների կյանքի կոչման տարբեր մոտեցումներ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի ակունքներում կանգնած են այնպիսի հոգեբաններ և մանկավարժներ, ինչպիսիք են Լ.Ս.Վիգոտսկին, Լ.Վ. Զանկովը, Դ.Բ.

Էլկոնինը, Վ.Վ. Դավիդովը և այլք: Այս տեխնոլոգիան առաջին հերթին կապում են քսաներորդ դարի հայտնի հոգեբան Լ.Ս. Վիգոտսկու անվան հետ:

Մինչև Լ.Ս. Վիգոտսկին մանկավարժության մեջ գերիշխում էր այն տեսակետը, որ ուսուցման ու դաստիարակության գործընթացը պետք է կազմակերպել երեխայի զարգացման մակարդակին համապատասխան: Բայց, ի հակառակ դրան, Վիգոտսկին առաջ է քաշում այն դրույթը, որ ուսուցումը միշտ պետք է առաջատար լինի երեխայի հոգեկան զարգացման նկատմամբ: Այսինքն՝ հենվելով երեխայի զարգացման ունեցած ռեալ ներկա մակարդակի վրա, ուսուցումը պետք է լինի մեկ քայլ առաջ, խթանի և իր ետևից տանի այն: Իսկ դա նշանակում է, որ գիտելիքների ձեռքբերումը պետք է կազմակերպվի դժվարության առավել բարձր մակարդակով, այնպես, որ մշտապես նոր տարրեր մտցնի երեխայի գործունեության մեջ, ձևավորի նոր հարաբերություններ, բացահայտի նրա ներքին հնարավորությունները: Զարգացում ապահովելու համար ուսումնական նյութն ու ուսուցման մեթոդները պետք է լինեն այնպիսին, որ երեխաներին կանգնեցնեն որոշակի դժվարությունների առաջ: Հենց վերջիններս հաղթահարելով էլ սովորողների մեջ տեղի է ունենում զարգացում: Հակառակ դեպքում նրանց զարգացումը ընթանում է շատ դանդաղ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի կիրառման ժամանակ ուսուցիչը հանդես է գալիս ոչ միայն ճշմարտության ու գիտելիքների հաղորդողի , այլ նաև որոնողական աշխատանքի կազմակերպչի ու ուղղորդողի դերում: Ըստ Վիգոտսկու՝ սովորողներն ունեն զարգացման երկու տարբեր աստիճաններ՝ իրական զարգացման և հնարավոր զարգացման աստիճան:

Իրական զարգացման աստիճանը անհատի մտավոր ներկա մակարդակն է, ինքնուրույն գիտելիքներ ձեռք բերելու ընդունակությունը: Հնարավոր զարգացման աստիճանը Վիգոտսկին անվանել է մոտակա զարգացման գոտի: Դա այն աստիճանն է, երբ անհատը գործում է ուսուցչի, ծնողների կամ առավել զարգացած հասակակցի օգնությամբ:

Զարգացնող ուսուցման տեխնոլոգիայի գլխավոր նպատակը այն է, որ նախապատրաստի երեխային ինքնուրույն ճանապարհով գիտելիքների ձեռքբերմանը, ճշմարտության որոնմանը: Զարգացնող ուսուցման տեխնոլոգիան

պետք է համապատասխանի մի շարք պահանջների, որոնցից առավել կարևորներն են ուսուցման նպատակաուղղվածությունը, մոտիվացիան, գործնական ուղղվածությունը, ուսուցման փուլայնությունը, հետադարձ կապի առկայությունը:

Ուսուցման նպատակաուղղվածությունը ենթադրում է ուսուցման նպատակների հստակ ներկայացում:

Ուսուցման մոտիվացիան կարող է լինել տարբեր. հետաքրքրություն գիտելիքների, կարողությունների, հմտությունների ձևավորման բուն գործընթացի հանդեպ, սովորողների հետ հաղորդակցվելու ցանկություն, ձգտում հետագայում աշխատանք գտնելու հանդեպ և այլն: Ուսուցման գործնական ուղղվածությունը այն է, որ ուսուցումը առաջին հերթին պետք է ուղղված լինի այնպիսի գիտելիքների յուրացմանը, կարողությունների և հմտությունների ձևավորմանը, որոնք անհրաժեշտ են կյանքում գործնական մի շարք խնդիրների լուծման համար: ՈՒսուցման փուլայնությունը ենթադրում է ուսուցման նկատմամբ տրամաբանական, հերթական, համալիր մոտեցում: Հետադարձ կապի առկայությունը: ՈՒսուցման արդյունքները միշտ պետք է համապատասխանության և համեմատության մեջ գտնվեն ուսուցման նպատակների հետ , որի հաջող իրականցմամբ էլ կորոշվի ուսուցման արդյունավետության չափը:

Տվյալների մշակումը և վերլուծությունը

Առարկա -Հայոց պատմություն

Դասարան -11 դասարան, 2րդ կիսամյակ Թեմա Հայկական հարցը 1912-1914թթ.

Օգտագործվող նյութեր -Դասագիրք,աշխատանքային տետր, քարտեզ / Ռ՚ Թաղևոսյան,Արևմտյան Հայաստանը 1941 թ., Եր.,2007/ատլաս/Բ. Հարությունյան Բ-մաս էջ 69/ՏՀՏ գործիքներ,պաստառ,նկարներ

Ամբողջական Պատկեր- Դասի նպատակը

Ա մակարդակ - Սահմանել Հայկական հարցի բովանդակությունը 1-ին աշխարհամարտի նախօրեին

Բ մակարդակ – Նկարագրել հայ ժողովրդի ազգային ձգտումները, Պաշտպանի այն տեսակետը ,որ ոչ ոք չպետք է ենթարկվի խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ անձը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի

Գ մակարդակ – Վերլուծել ,ճանաչել և գնահատել հայ քաղաքական և հոգևոր գործիչներին ,որոնք եվրոպական և ռուսական կառավարությունների առջև պաշտպանում էին հայկական հարցը; Արտահայտել սեփական գաղափարները և արժեքները վիճարկելու ցանկություն :

Վերջնարդյունքը:

Ա մակարդակ – կարողանա հիշել Արևմտյան Հայաստանում բարենորոգումներ անցկացնլու վերաբերյալ Ռուս-Թուրքական համաձայնագրի տարեթիվը և կկարողան թվարկել այն դրական փոփոխությունները , որոնք նախատեսվում էին բարենորոգումների և Ռուս-Թուրքական համաձայնագրի շրջանակներում: Կկարողանա մատչելի կերպով ներկայացնել իր ասելիքը

Բ մակարդակ –կարողանա բնութագրել հայկական հարցի լուծմանը նպաստող գործոնները,և մի քանի գործիչների այդ ուղղությամբ կատարած աշխատանքները , 1ին աշխարհամարտից առաջ ստեղծված ռազմաքաղաքական ճամբարների ռուսական և եվրոպական երկրների քաղաքականության մասին:Խնդրի հանդիպելիս կփորձի հասկանալ, թե ինչն է եղել դրա առաջացման պատճառը

Գ մակարդակ – կարողանա գնահատել հայ ժողովրդի ,նրա հոգևոր և քաղաքական գործիչների հայրենանվեր գործերը՝հայկական հարցին լուծում տալու համար, կկարողանա համեմատել փաստերը,վերլուծել,արժևորել հայկական հարցի վերաբացման նշանակաությունը և արդիականացնել թեման: Կկարողանա քննադատորեն անդրադառնալ անցյալի փորձին՝հետագա առաջընթացի համար: Դասի ընթացքը և մեթոդները -Խմբային աշխատանք Т –ա ձև ,m-աձև աղյուսակներ ,

գծային ուղիղ,մտագրոհ դասախոսություն ԳՈՒՍ մեթոդ: 5 ր.-ողջունել աշակերտներին,կատարել հաշվառում,տնային առաջադրանքների ստուգում,անհասկանելի հարցերի քննարկում; 5 ր. -Նախորդ դասի ամփոփում ,մտագրոհ 4-5 ր. – գծային ուղիղի միջոցով գրատախտակին գրել կարևոր թվերը,իրադարձությունները,որոնք կապ ունեն հայկական հարցի հետ(1856թ. Ղրիմի պատերազմ,Արևելյան հարց,1877-1878թթ.,Սան Ստեֆանո,16 և 25-րդ հոդվածմեր,Բեռլինի կոնֆերանս,61-րդ հոդված, Մայիսյան ծրագիր,1894-1896թթ.,հայկական կոտորախներ,1908թ.,երիտթուքեր, և այլն):Աշակերտները պետք է գրառումնր անեն իրենց տետրերում: 20ր.- քարտեզի վրա ցույց տալով Թուրքիայի տարածքը և հայաբնակ վիլայեթները,սեղմ դասախոսել այնուհետև խմբերով աշխատել m-աձև և T-աձև աղյուսակներով:

Հայկական ծրագիր --Ընդհանրություն Թողքական ծրագիր 1913թ. Հունիսի 4-ի ռուսակամ բարենորոգումների ծրագիրը 1914թ. Հունվարի 26-ի ռուս-թուրքական համաձայնագիրը Ամփոփում Ամփոփելով գրել ռուսական բարենորոգումների և ռուս-թուրքական համաձայնագրի կարևոր կետերը և կազմակերպել քննարկում,որի արդյունքում աշակերտները գնահատվում են :

Տերմիններ և հիմնական գաղափարներ-- Հայկական հարց,հայ-ազգային կենտրոնական բյուրո,դիվանագիտական հարաբերություններ,բարենորոգումների ծրագիր:

Գնահատում --Միավորային գնահատում,գնահատվում են առավել ակտիվություն ցուցաբերած աշակերտները

Տնային առաջադր-- Ցուցաբերել տարբերակված մոտեցում ,պատասխանել դասարքերի թեմայի հարցերին,լրսցուցիչ տեղեկություններ հավաքել այդ ժամանակաշրջան հասարակական , քաղաքական և հոգևոր գործիչների մասին,կազմել պաստառներ:

Հարցեր ---Փաաստերի համադրմամբ և հարցերով վեր հանել հայակական հարցի պատմական նշանակությունը և արդիականությունը:

Եզրակացություն

Քննադատական մտածողությունը դիտարկվում է որպես տրամաբանական, ռեֆլեքսիվ, ստեղծագործական մտածողության յուրահատուկ ձև: Քննադատական մտածողության զարգացման հարցերը տրամաբանորեն կապված են անձի ստեղծագործական գործունեության, ինքնիրացման, ինքնուրույնության հետ: Քննադատական մտածողությունը ռեֆլեքսիվ մտածողություն է, որը զարգացնում է տեղեկատվությունը մշակելու, գնահատելու և ստեղծագործաբար կիրառելու կարողությունը:

Քննադատական մտածողությունը նպաստում է ըստ իրավիճակների գործունեության ձևեր ու եղանակներ ընտրելուն, հիմնավորված որոշումներ ընդունելուն, հիմնախնդիրներ բացահայտելուն, վարկածներ առաջադրելուն, այլընտրանքային տեսակետներ ընդունելուն կամ հիմնավորված մերժելուն, գնահատողական վերաբերմունք ձևավորելուն: Նշված հատկանիշները պահանջում են ճանաչողական բարձր կարողությունների ձևավորվածություն, քանի որ նմանօրինակ գործընթացների համար անհրաժեշտ է խնդրի համակողմանի ուսումնասիրություն հուսալի տեղեկատվության և դրա նկատմամբ վերլուծական - գնահատողական վերաբերմունքի հիման վրա:

Քննադատական մտածողությունը բնութագրվում է որպես ճանաչողական գործընթաց, որը վերաբերում է փորձի արդյունքում ստացված տեղեկատվության վերլուծությանը, համադրմանն ու գնահատմանը դիտումների, խորհրդածությունների կամ հաղորդակցման միջոցով:

Անձի քննադատական մտածողության ձևավորումը կախված է նրա ընդունակություններից, հետաքրքրություններից, կարևոր են նաև ուսումնական նյութի բովանդակությունն ու կիրառվող մանկավարժական տեխնոլոգիաները: Ուսումնական թեմաների արդիականությունը, պրոբլեմային բնույթը, ուսումնաճանաչողական գործընթացի սուբյեկտների ինքնուրույնությունն ու հաղորդակցման վրա հիմնված փոխգործակցությունը, տեղեկատվական-կրթական միջավայրը, գիտական գիտելիքները, վերլուծական կարողությունները նպաստում են քննադատական մտածողության զարգացմանը: Քննադատական մտածողությունը դրսևորվում է խոսքային գործունեության բոլոր ձևերում:

Քննադատական մտածողության զարգացմանը նպաստում են ուսումնական նյութերում արտահայտված մտքերի և դիրքորոշումների գնահատումը, բազմատեսանկյուն դիտարկումը, սեփական մտքերի հետ համեմատումը, համադրումը, եզրահանգումների ձևակերպումը:

Քննադատական մտածողության էությունն այն է, որ ուսուցիչը պատրաստի գիտելիք հաղորդողից վերածվի սովորողի ուսումնական աշխատանք կազմակերպողի: Աշակերտը ինքնուրույն որոնողական աշխատանքի արդյունքում ինքն է ձեռք բերում անհրաժեշտ գիտելիքներ:

Քննադատական մտածողությունը ճանաչողության ինտերակտիվ գործընթաց է: Այն ընդհանրական մոտեցում է, որը օգնում է սովորողներին գնահատել գաղափարների արժեքը կամ արդյունքները՝ նախքան որոշումներ կայացնելը կամ տեսակետ ձևավորելը:

Քննադատական մտածողությունը զարգացնում է՝

- սովորողների՝ խմբերում աշխատելու կարողությունը,
- միջառարկայան և ներառարկայական կապերի ձևավորման կարողությունները /տեղեկատվության վերլուծություն և համադրություն/,
- գիտելիքները ստեղծագործաբար իմաստավորելու, տեղեկատվության՝ ըստ նոր և կարևոր լինելու ասատիճանի համակարգելու կարողությունը,
- հավասար պայմաններում համագործակցելու, միևնույն ժամանակ ղեկավարելու և դրա համար անհրաժեշտ կարողություններ և հմտությունները,
- սեփական նախաձեռնություն ցուցաբերելու կարողությունները,
- տարբեր կարողություններ ունեցող մարդկանց հարգելու կարողությունները, Այսպիսով՝ կարելի է ասել, որ՝

1. Գիտելիքը /տեղեկատվությունը/ ոչ թե քննադատական մտածողության արդյունքն է այլ նրա խթանը կամ առաջին քայլը:
2. Քննադատական մտածողությունը սկսվում է հարցադրումներից և լուծվելիք հիմնախնդրի պարզաբանումից:
3. Քննադատական մտածողությունը պարտադիր կերպով պետք է տանի դեպի համոզիչ փաստարկների ձևավորում:

4. Քննադատական մտածողությունն ունի հասարակական ուղղվածություն:

Այս տեխնոլոգիական միջոցները ենթադրում են բազմազան, հարուստ կրթական միջավայր: Դրանք նպաստում են հետաքրքրասիրության, մղում են հայտնաբերումների, հայտնագործող փորձերի՝ մեծ չափով նպաստելով և հարստացնելով ուսումնական գործընթացը: Արդեն փաստ է, որ ուսուցումն առանց համակարգչի այլևս հնարավոր չէ պատկերացնել: Կրթական համակարգը ամեն կերպ պետք է աջակցի ուսուցման կազմակերպմանը՝ սովորողների համար ստեղծելով նոր տեխնիկական սարքավորումներին համապատասխան պայմաններ ՝ ապահովելով դրանց արդյունավետ կիրառումը:

Նոր մեդիամիջոցները ենթադրում են գիտելիքների ձեռք բերման բոլորվին նոր ուղղություններ և ուսուցման կազմակերպման նոր ձևեր: Դասավանդման ավանդական ձևերի կողմնակիցները բողոքում են՝ պատմողաբար (դեկլարատիվ), փոխանցվող գիտելիքը այլևս պահանջարկ չունի, այժմ ուսուցմանը, որպես գործընթացի, հարկավոր է նպաստել՝ ստեղծելով ժամանակին համապատասխան տեխնոլոգիական պայմաններ: Ավանդական ուսուցումը հիմնված է կառուցվածքային այնպիսի բովանդակության վրա, որը ենթադրում է ուսուցչի միջոցով դեկլարատիվ գիտելիքի փոխանցում սովորողին: Մինչդեռ տեղեկատվական հասարակության կրթության նկատմամբ պահանջը այլ է: Այն սովորողներից, ովքեր տիրապետում են նորագույն տեխնիկայի և ինքնուսուցման մեթոդների, պահանջվում է առավել ակտիվություն:

Նոր տեխնոլոգիաները կառուցողական են երկու առումներով. մի կողմից դրանք «գիտելիքի գործիք» են, մյուս կողմից՝ ուսումնական հարուստ միջավայր: Այսուհանդերձ, նույնիսկ իդեալական կրթական միջավայրն անհնար է առանց կոնկրետ հանձնարարականների, ուղղորդման և աջակցության: Տարատարիք խմբերի ուսուցման հետ կապված խնդիրները, ժամանակի կամ, ասենք՝ մոտիվացիայի բացակայությունը չի կարող լուծվել առանց ուսուցչի կողմից արված հրահանգների և վերահսկողության: Այս տիպի ուսումնական գործընթացի դրականը «վերահսկողության պահպանումն» է:

Գրականության ցանկ

1. Համագործակցային ուսուցում: Ձեռնարկ/Ա. Հովհաննիսյան և ուրիշներ.-Եր.:Անտարես, 2006, -123 էջ:
2. Պետրոսյան Հ.Հ. Կրթության ժամանակակից տեխնոլոգիաներ:Հարցերի, առաջադրանքների, թեստերի և խնդիրների ժողովածու, -Եր.: Ան Ջոն, 2008:
3. Վարդումյան Ս. Տ., Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, քսաներորդ դարի մանկավարժական տեսություններ. ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, -Եր.:<Նոյյան տապան>, 2005, -405 էջ, 341-364 էջեր:
4. Սարգսյան Ա.Հ., Մշակութային տեսություն, Երևան 2003:
5. Երևանի պետական համալսարան,Անձի հոգեբանության տեսական և կիրառական հարցեր,Գիտական հոդվածների ժողովածու, Երևան, 2016:
6. Սարգսյան Ա.Ա. Համամարդկային և ազգային արժեքները սոցիալական տարբեր ինստիտուտներում, ԵՊՀ, հոդված,Իջևան, 2019:
7. Լրամշակումը՝Ա.Նազարյան, Հանրակրթական ավագ դպրոցի չափորոշիչ և ծրագրեր , Երևան , 2009 6. Ա.Ղուկասյան , Հայոց պատմություն ,Ուսուցչի ձեռնարկ ,Երևան ,2013